ՏԵՂԵԿԱՏՈՒ

Փետրուարի 2-ին Ս. Էջմիածին վերադարձաւ Գէորգեան ճեմարանի տեսուչ Տ. Բագրատ վրդ., որ ճեմարանի գործերով գնացել էր Մոսկվա և Պետերբուրգ: Հայր սուրբին այս անգամ ևս յաջողուել է մի քանի դրամական նուիրատուութիւններ անել տալ յօգուտ ճեմարանի: Մոսկվաբնակ Թորոսեան եղբայրները, որոնք 30,000 ռուբլի նուիրել էին ճեմարանի բակում բնագիտական կաբինետ հիմնելու, այժմ 10,000 ռ. էլ աւելացրել են. ուրեմն միայն բնագիտական հաստատութեան շինութեան համար այժմ կայ 40,000 ռ. այդ դրամագլուխն այժմ տեղափոխուած է ս. Էջմիածին: Նոյն Թորոսեանները խոստացել են, երբ բնագիտական հաստատութիւնը պատրաստ լինի, իրանց ծախքով հիմնել այնտեղ նաև օդերևութաբանական և առողջապահական դիտարան և դրա համար անհրաժեշտ բոլոր իրերն առնել ուղարկել:—Բացի այդ, Մոսկվաբնակ տիկին Վ. Քանանեան նուիրել է 1500 ռ. որպէսզի այդ փողով նոր կառուցուելիք թանգարանում հոգեբանական և մանկավարժական փորձեր կատարելու համար գործիքներ գնուին: Տիկին Քանանեանը նուիրել է նաև 10 000 ռ., որի տոկոսներով հրատարակուելու են մանկավարժական հոգեբանական ուսումնասիրութիւններ:

Պետերբուրգում հայր Բագրատին յաջողուել է հայ եկեղեցիների խորհրդից ստանալ տարեկան 1000 ռ. ճեմարանի բակում դիւղատնտեսական գործնական զբաղմունքներ կազմակերպելու համար. անցեալ տարուայ 1500-ի հետ, ճեմարանն այժմ այդ նպատակով ունի 2500 ռ.: Պետերբուրգի հայոց եկեղեցիների խորհուրդը բացի դրանից 1000 ռ. է յատկացրել ճեմարանի ֆիզիկական կաբինետի համար գործիքներ գնելու:

Յունուարի վերջերին Մայր Աթոռ ժամանեց Ղարաբաղի թեմի կառավարիչ Տ. Զաւէն վարդապետը իւր թեմի հայ ազգաբնակութեան հոգևոր վարչական դպրոցական և կալուածական դրութեան մասին զեկուցում տալու: Տէր Տեղակալը առանձին ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ է վերաբերուել Զաւէն վարդապետի զեկուցմանը և կալուածական խնդրի նկատմամբ նրա արած առաջարկութիւններին: Տ. Տեղակալի մօտ սինոդականների ներկայութեամբ կարդացուել է այդ զե-

կուցումը և որոշուել է յատուկ մասնագէտի և տեղական հոգևոր իշխանութեան ղեկավարութեամբ ամբողջ թեմի մանրամասն և ճշգրիտ ինվենտար կազմել, թարգմանել տալ այդ ինվենտարը եւրոպական լեզուներով և ուղարկել այն ընկերութիւններին, որոնք դիմել են և առաջարկել իրանց պայմանները օգտուելու թեմի կալուածներից։—«Արարատի» մէջ կաշխատենք մանրամասն տեղեկութիւն տալ այդ շահեկան զեկուցագրի մասին։

ՊՈՍՏԱՐԿԴ.

Մոսկվա Էմ. Ք. Նազարեանին. «Պրաւոսլաւ եկեղեցու հայեացքը հայ եկեղեցու վրայ»—թարգմանութիւնը ուղարկուեց Զեզ. իսկ «Տնտարի կտակը» լոյս կըտեսնի յաջորդ համարում։

Կախ Աւան Թադ. Աւդալբէկեանին. «Հողի վիշտը» Ձեր գրածի համաձայն յանձնեցինք Վ. Փոթէյեանին։

Կարս Ա. Օլթեցեանին. «Հայրենագիտութեան նիւթի մշակումը» ցաւ օր որպի չենք կարող տալել յօդուածի երկարութեան պատճառով։ Յօդուածը Զեզ յետ ուղարկեցինք։

Ն. Նախիջեւան Հր. Աճառեանին. Զեզ նամակ գրուեց «Գաղթականութիւնը» յօդուածի մասին։

Թիֆլիզ Կարապետ Ղազարեանին
Էջմիածին Անուրջին
Ն. Նախիջ. Նիկ. Ք. Բոնակեանին
Գանձակ Ն. Ռշտունուն
} Զեն տպուի Ձեր ուղարկած յօդուածներն ու ոտանաւորները, նաև թարգմանութիւնները.

Տաճկաստան Մարկոս քհնյին. «Կրօնասոյցի զրոյցները» և «Փոքրիկ եկեղեցի» չեն տպուի, իսկ «Զրոյցներից Աստուծոյ և նրա արդարութեան մասին» շնորհակալութեամբ կօգտուենք «Արարատի» համար։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1. Pessimist-ի կազմած «Փոքձնական մանկավարժութեան արդիւնքները, ըստ պրոֆ. Մէյմանի. 1911 թ. Էջմ. գինն է 30 կ.

2. Կարէն Միքայէլեան. Զրկանքի յոյզեր Թիֆլ. 1907 թ. գինն է 50 կ. 212 էջ.

3. Կ. Միք. Զմրան երեկոյ Մոսկվա 1912 թ. գ. 60 կ. 151 էջ.

4. Ազգագրական հանդէս 1911 թ. XXI գիրք.